

ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԿ ՄԱՍԻԿՈՆԻ ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ «ԻՐԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1940-50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ» ԹԵՄԱՅՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մերձավոր Արևելքը վաղուց իր վրա է բևեռել աշխարհի տարբեր խոշոր խաղացողների ռազմավարական, ստրատեգիական ուշադրությունը, ինչը տարածաշրջանը վերածել է համաշխարհային շահերի բախման կարևորագույն թատերաբեմի: Եվ բնական է, որ արևելյան երկրների, դրանցում առկա բնական պաշարների, աշխարհագրական դիրքի հանդեպ ամենաակտիվ դերակատարում կարող էին ստանձնել զարգացած երկրներն ու գերտերությունները: Այդ իմաստով, հատկապես արևմտյան խոշոր տերությունները բնական առաջամարտիկ են և Էդուարդ Մայիդի բնորոշմամբ՝ օրիենտալիզմի (արևելաբանության) հիմնադիրներ: Համաշխարհային քաղաքականության մեջ 20-րդ դարում ևս շարունակվել են շահերի, ազդեցության լծակների մրցակցություն և տեկտոնական շարժեր, որոնց բնական ու դասական թատերաբեմ էր Մերձավոր Արևելքը: Ուստի, ներկա և ապագա խոշոր աշխարհաքաղաքական զարգացումների տրամաբանությունը հասկանալու համար կարևոր է խորքային ուսումնասիրության ենթարկել համաշխարհային գործընթացների տեսանկյունից կարևոր ժամանակաշրջանների պատմությունը:

Ահա վերը նշված իրողությունների տրամաբանության ներքո է պետք դիտարկել Հայկ Սողոմոնյանի ներկայացրած աշխատությունը, որտեղ քննվում է 20-րդ դարի ամենալարված ժամանակաշրջաններից մեկում Իրանի ու Մեծ Բրիտանիայի հարաբերությունները: Թեման ունի գիտական արդիականություն, լայն տիրույթում կիրառական նշանակություն, պարունակում է գիտական նորույթ: Ատենախոսությունում արված վերլուծությունը թույլ է տալիս հստակ պատկերացում կազմել ոչ միայն անցյալ դարի միջազգային և տարածաշրջանային բարդ խնդիրներից

մեկի վերաբերյալ, այլև որոշ զուգահեռներ տանել ներկայիս զարգացումների, իրողությունների հետ, ինչպես նաև դիտարկել այդ ամենի պատմական հենքը:

Աշխատանքն իրականացվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն ուսումնասիրությունների, փաստաթղթերի, մամուլի հրապարակումների հիման վրա: Հարկ է հատուկ նշել, որ ստենախոսության մեջ օգտագործվել են ուսումնասիրվող ժամանակաշրջանի ականատեսների և գործող անձանց հուշերը, օրագրերը, որոնք բացի կարևոր փաստական աղբյուրներ լինելուց, աշխատանքին հաղորդում են առանձին հետաքրքրություն:

Ստենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, որոնցից առաջինում ներկայացվում է Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ հատուկ շեշտադրում անելով խորհրդաբրիտանական զորքերի կողմից Իրանի ռազմակալմանը, այդ ընթացքում քաղաքական ու հատկապես տնտեսական զարգացումներին, վերահսկման մեխանիզմներին: Երկրորդ գլխում քննության է առնվում արդեն Սառը պատերազմի սկզբնական փուլում Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը Իրանի և այդ երկրում ձևավորված ճգնաժամի հանդեպ: Երրորդ գլուխը նվիրված է Իրանի և Մեծ Բրիտանիայի հարաբերություններին նավթարդյունաբերության ազգայնացման ճգնաժամի տարիներին՝ 1949-1954 թվականներին. քննվում են իրանական ազգայնականության վերելքը, Իրանում ռազմական հեղաշրջումը և դրանում Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի դերակատարումը: Ստենախոսության վերջում տրվում են եզրակացությունները:

Հարկ ենք համարում շեշտել, որ աշխատանքն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ, արված վերլուծությունների տրամաբանված և հիմնավորված լինելով: Կարող ենք վստահորեն պնդել, որ այն հաջողված և հասուն ստենախոսություն է, Հայկ Սողոմոնյանի կողմից տարիների հետևողական աշխատանքի արդյունք է: Ստենախոսության մեջ բավական խորքային ու հմտորեն է պատկերված իրանական նուրբ դիվանագիտության առանձնահատկությունները, բարդ, ճգնաժամային իրավիճակներում դրա դրսևորման մեխանիզմները, որը

պահանջում է նախ վերլուծական ընդունակություններ, երկրորդ՝ թեմայի և ուսումնասիրվող երկրի մասին խորքային գիտելիքներ: Ուշագրավ է էջ 115-ում ատենախոսի արած վերլուծությունը, որ Իրանի հանդեպ իրենց գործնական քաղաքականությունը հաջողությամբ իրագործելու համար բրիտանական իշխանությունները, ի թիվս այլ գործոնների և գործիքակազմի, դիմել են արևելագետ-իրանագետների օգնությանը՝ ակնկալելով նրանցից տեսական գիտելիքների հիման վրա առաջարկներ: Սա ևս մեկ անգամ խոսում է գիտելիքահեն քաղաքականության, ինչպես նաև արևելագիտության ստրատեգիական կարևորության մասին:

Ատենախոսության հետ կապված ունենք առանձին դիտարկումներ և հիմնականում առաջարկներ, որոնք կարող են օգտակար լինել այն հրատարակելու պարագայում ևս.

1. Չնայած, որ աշխատության մեջ օգտագործվել են ժամանակակիցների հուշեր, օրագրեր, որոնք պարունակում են գործընթացների վերաբերյալ վերլուծություններ, սակայն աշխատանքը կշահեր, եթե ատենախոսի կողմից իրականացվեին հատուկ մշակված հարցաշարով հարցազրույցներ դեպքերին ի մոտո ծանոթ անձանց հետ. օրինակ՝ ԹՈՒԴԵ-ի անդամների:

2. Ատենախոսության եզրակացություններ բաժինը կազմված է ոչ ընդունված ձևաչափով, ինչն առաջացրել է որոշակի ոչ հստակություն: Կարելի է դրանք ներկայացնել առավել կանոնակարգված եղանակով, որպեսզի ասվածի հասցեականությունն առավել ընդգծված լինի:

3. Օգտագործված գրականության մեջ պարբերական մամուլի նշումը, թվարկումը նույնպես հստակ չէ. կներելի էր դրանք խմբավորել և ներկայացնել որպես տվյալ պարբերականի որոշակի տարիների մշտազանում, իսկ առանձին հոդվածները ներկայացնել ոչ թե պարբերական մամուլի բաժնում, այլ հոդվածների:

4. Աշխատանքում երբեմն նկատվում են նկարագրողական հատվածներ, որոնք հրատարակման պատրաստելու դեպքում ցանկալի է կրճատել:

